ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

12 ՄԱՅԻՍԻ 2020թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Անդրանիկ Հակոբյանը, Վարդան Սամսոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Միհրան Մելքումյան, Կարեն Մնացականյան, Մանուկ Հովհաննիսյան, Լեվոն Խաչատրյան , Հակոբ Բաբայան, Սեդրակ Սաֆարյան, Սամվել Գարսեվանյան , Մարոզ Սարիբեկյան, Լուսինե Զոբանյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարոզ Սարիբեկյանը

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ակունք համայքի ավագանու 2020 թվականի մայիսի 12-ի թիվ 4 հերթական նիստի օրակարգը

1.Հաղորդում համայնքի 2020թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման վերաբերյալ
2.Հողամասերի օտարման մասին
3. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
4. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22/

Լսեցին

ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՁՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ,«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի ,համայնքի ավագանին՝ որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2020 թվականի
բյուջեի առաջին եռամսյակի կատարման վերաբերյալ՝ համաձայն հավելվածի

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՇԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ,67-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի,համայնքի օգտագործման սխեմային համապատասխան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարել .
1) աճուրդ–վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գներ՝ համաձայն հավելված 1-ի :
2) ուղղակի վաճառքի միջոցով,ընդլայնման նպատակով և հաստատել ուղղակի վաճառքի գներ համաձայն հավելված 2-ի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՇԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանապետության կառավարության2009թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 1028-Ն որոշումը՝ «Նոր գյուղ բնակավարի գոտիավորման և օգտագործման սխեման հաստատելու մասին»,և Կապուտան բնակավայրի ավագանու2012 օգոստոսի 31-ի թիվ 17 որոշումը՝ «Կապուտան բնակավայրի պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին»,համայնքի ավագանին որոշում է՝

1.Փոխել հողամասերի նպատակային նշանակությունը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՇԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010թվականի հունիսի 1-ի թիվ 186 -Ն հրամանը, համայնքի ավագանին որոշում է՝

1. 07 -049-0214-0020 կադաստրային ծածկագրերով հողամասը ճանաչել Ակունք համայնքի սեփականություն :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26/

Ավագանու անդամներ

ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵԽԱԿ ՄԵԽԱԿՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՈՌ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ԷԴԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՎՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ ______________

Նիստն արձանագրեց՝ Մարոզ Սարիբեկյանը

____